ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/200

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 17.05.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7765-2022 գրությամբ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.04.2022թ. թիվ ՊՆ/02/2005-2022 գրության հիման

վրա, 02.05.2022թ. թիվ 26/26-1/7765-2022 գրությամբ նախաձեռնել է «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ Պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար զուգարանի թղթի ձեռքբերման նպատակով 01.04.2022 թվականին հրապարակել է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/20» գնանշման հարցումը (այսուհետ նաև՝ գնանշման հարցում).

1.2. «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից) սահմանված ժամկետում ներկայացրել է գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն (այսուհետ նաև՝ հայտ):

1.3. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022 թվականի թիվ 3 արձանագրությամբ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ մասնավորապես.

1.3.1. «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տվյալներ: Անհրաժեշտ է Հավելված N 1-ով ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը կամ ներկայացնել պատշաճ ձևով լրացված Հավելված N 1.3-ը:

1.3.2. Հավելված 1.1-ի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացված: Չի ներկայացվել հրավերով սահմանված «Մակնշումը Պատկերի վրա պետք է ամրացված լինի պիտակ վրան տպագրված «Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ», արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրանքի անվանումը, անվանական չափերը (գլանափաթեթի երկարությունը և լայնությունը), քանակը, արտադրման տարեթիվը:

1.4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով հայտերի գնահատման նիստը կասեցվել է և Մասնակցին տրվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու ժամանակ:

1.5. Պատվիրատուի կողմից Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ենթադրաբար ծագել են 25.04.2022 թվականին և նույն օրն էլ համապատասխան գրությամբ Մասնակցի վերաբերյալ տեղեկությունները ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

1.6. ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/20 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի արձանագրությունը (շտկման ենթակա արձանագրությամբ ներառյալ) պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 27.04.2022 թվականին:

2. Գործի փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերության համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ հոդվածի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 43-րդ կետի համաձայն՝ Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման նիստի

արձանագրության բնօրինակից արտատպված (սկաեավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

Կարգի 45-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եախաաեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները' համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհրդին:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա են պարտավորության խախտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները պատասխանատվության միջոցները, իսկ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը: Մասնակցի ստանձնած պարտավորության խախտման արդյունքում պետք է առկա լինի նաև Պատվիրատուի կողմից գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցումը, որը իր հերթին պետք է իրականացվի համապատասխան ընթացակարգով: Մասնավորապես հրավերի պահանջների անհամապատասխանության արձանագրման արդյունքում Հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով պետք է կասեցվի, Մասնակիցը պետք է ծանուցվի արձանագրված անհամապատասխանության

վերաբերյալ, նրան հնարավորություն տրվի կասեցման ժամանակահատվածում շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, որի չշտկման դեպքում նոր միայն հայտը գնահատվի անբավարար և մերժվի: Պատվիրատուի գործողությունների ոչ իրավաչափ կատարումը կարող է հանգեցնել գնման գործընթացին մասնակցի մասնակցության դադարեցմանը սակայն ոչ իր մեղքով, այս պարագայում պարտապանը պարտավորությունը չկատարելու համար ազատվում է պատասխանատվությունից մեղքի բացակայության հիմքով:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ թեպետև գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 15.04.2022 թվականի արձանագրային որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը և մասնակցին առաջարկել շտկել արձանագրված ենթադրյալ անհամապատասխանությունը, սակայն ըստ էության չի պահպանվել Կարգի 41-րդ կետի պահանջները: Փաստացի ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/20 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի արձանագրությունը կազմվել է 15.04.2022 թվականին, սակայն պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 27.04.2022 թվականին, այսպիսով չի պահպանվել ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման 43-րդ կետը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը բազմիցս իր որոշումների մեջ (օրինակ՝ ՍՑ-ՆԳ-2020/266) անդրադարձել է ժամկետների խախտմանը նշելով, որ համապատասխան ժամկետների սահմանափակումը նախատեսելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների ու պարտականությունների իրագործմանը Կարգի 41-րդ հոդվածից հետևում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու պարտականություն: Այսպիսով գործում առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 39-րդ կետի, 40-րդ կետի 2-րդ և 43-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթները ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.04.2022 թվականի նիստի թիվ 3 արձանագրությունը նույն օրը տեղեկագրում հրապարակելու փոխարեն, հրապարակել է

27.04.2022 թվականին ըստ էության գրկելով բոլոր մասնակիցներին օրենքով պահպանվող մրցակցության և հավասարության սկզբունքներից բխող մասնակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքից: Ընդ որում պետք է փաստել, որ առկա չէ Պատվիրատուի կողմից 15.04.2022 թվականին արձանագրված անհամապատասխանություն, որը հրապարակվել է տեղեկագրում և ըստ էության 15.04.2022 թվականին արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ արձանագրության բացակայությունն ինքնին փաստում է Պատվիրատուի կողմից շտկման գործընթացը օրենքով և Կարգով սահմանված պահանջների խախտմամբ կատարված լինելը: Ուստի Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողություններից բխող հետևանքները չեն կարող բացասաբար ազդել ընկերության նկատմամբ և ընկերության կողմից հնարավոր չէ արձանագրել պարտավորության խախտման փաստը, քանզի ընկերությունը ուներ պարտավորություն շտկելու միայն արձանագրված անհամապատասխանությունը, որը 15.04.2022 թվականին առկա չէր, իսկ Պատվիրատուն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի ի հայտ գալը փաստել են 25.04.2022թվականին համապատասխան գրությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու միջոցով, այնինչ 15.04.2022 թվականի արձանագրությունը հրապարակել են ղրանից հետո 27.04.2022 թվականին: Հետևաբար գտնում եմ, որ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Նշվածից զատ պետք է փաստել հետնյալը, որ Կարգի 45-րդ հողվածի համաձայն Օրենքի 6-րդ հողվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհրդին:

Նշված իրավական նորմի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար սահմանել է հատուկ ընթացակարգ, համապատասխան ժամկետներով, որոնց չպահպանումը հանգեցնում է ընթացակարգի մերժմանը, քանզի այն իրավաղաղարեցնող ժամկետ է, որի սպառմամբ Պատվիրատուն կամ լիազոր մարմինը զրկվում են համապատասխան ընթացակարգի նախաձեռնման իրավունքից:

Նշվածի և սույն գործի փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում պետք է փաստել նաև հետևյալը, որ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ենթադրյալ հիմքերն ի հայտ են եկել 25.04.2022 թվականին, որից հետո Պատվիրատուն մինչև 25.04.2022 թվականը մասնակցի տվյալները ուղարկել է լիազոր մարմնին, ով իր հերթին մինչև 02.05.2022 թվականը պետք է հանդես գար համատասխան ընթացակարգի նախաձեռնման միջնորդությամբ:

Քանզի սույն ընթացակարգի շրջանակում առկա փաստաթղթերից ակնհայտ չէ թե ՀՀ ֆինանանսների նախարարությունը երբ է ուղարկել համապատասխան գրությունը սույն ընթացակարգի նախաձեռնման համար, սակայն պետք է արձանագրել այն հանգամանքը, որ ընթացակարգի նախաձեռնման հիմքերն առնվազն 02.05.2022 թվականին պետք է ուղարկված լինեին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ընթացակարգը նախաձեռնվել է 16.05.2022 թվականին, ապա առկա են այնպիսի ենթադրություններ, որ ընթացակարգի նախաձեռնման ժամանակ չեն պահպանվել կարգի 45-րդ կետի դրույթները: Հաշվի առնելով վերոգրյալը միջնորդում եմ պահանջել ՀՀ ֆինանսների նախարարությունից տրամադրելու տեղեկատվություն այն մասին, թե սույն ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացող գրությունը, որ թվականին է ուղարկվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ բացակայում են «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմքերն, ուստի խնդրում եմ մերժել նախաձեռնված ընթացակարգը»:

«ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/200 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 14:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.04.2022թ. թիվ ՊՆ/02/2005-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/20» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ է ներկայացրել նաև «Մարկետ Թրեյդ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը կամ պատշաճ ձևով լրացված Հավելված N 1.3-ը, իսկ տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացվել: 2022թ. ապրիլի 15-ին Մասնակցին ծանուցվել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ուստի 19.04.2022թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Մարկետ Թրեյդ» ՍՊ ընկերության հայտը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/200 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 14:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/200 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/200 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զուգարանի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տվյալներ: Անհրաժեշտ է Հավելված N 1-ով ներկայացնել իրական

շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը կամ ներկայացնել պատշաճ ձևով լրացված Հավելված N 1.3-ը: Ինչպես նաև Հավելված 1.1-ի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացված: Չի ներկայացվել հրավերով սահմանված «Մակնշումը Պատկերի վրա պետք է ամրացված լինի պիտակ վրան տպագրված «Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ», արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրանքի անվանումը, անվանական չափերը (գլանափաթեթի երկարությունը և լայնությունը), քանակը, արտադրման տարեթիվը: Մնացած բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 3 %: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար ընտրանքային կարգով ՀՀ ԶՈՒ ՌԲՎ հիգենիկ և համաճարակային անվտանգության ծառայությունը պետք է իրականացնի նշված ապրանքատեսակի բաղադրության և որակի վերաբերյալ լաբորատոր հետազոտություն» պահանջները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.04.2022թ. armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն 19.04.2022թ. շարունակելով նիստը արձանագրել է, որ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկումներ չեն իրականացվել: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշել է մերժել Ընկերության հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7765-2022

գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.04.2022թ. թիվ ՊՆ/02/2005-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ <u>գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է</u> պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ <u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից

առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն ենթակետի թ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հողում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե

անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար խողովակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տվյալներ: Անհրաժեշտ է Հավելված N 1-ով ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը կամ ներկայացնել պատշաճ ձևով լրացված Հավելված N 1.3-ը: Ինչպես նաև Հավելփսծ 1.1-ի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացված, ինչից ելնելով որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.04.2022թ. armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ: Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն 19.04.2022թ. շարունակելով նիստը արձանագրել է, որ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկումներ չեն իրականացվել և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման

մասին» կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովն որոշել է մերժել Ընկերության հայտը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, ընդ որում՝ ծանուցման մեջ մանրամասն նշվել են շտկման ենթակա անհամապատասխանությունները, սակայն արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2022/200 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված առարկությանը՝ հարկ եմ համարում հայտնել, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 02.05.2022թ. թիվ 26/26-1/7765-2022 ուղղված գրությամբ նախաձեռնել է «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որպիսի պայմաններում Կարգի 45-րդ կետով սահմանված որևէ խախտում առկա չէ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջների խախտմանը՝ հայտնում է, որ Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ և նույն օրը՝ 15.04.2022թ., Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, հետևաբար գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից պահպանվել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության մասին նույն օրը ծանուցելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7765-2022 գրությամբ «ՄԱՐԿԵՏ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**